ՀԱԿՈԲՅԱՆ Հ. Վ. Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը. *Երևան, «Աստղիկ» հրատարակչություն, 2002, 414 էջ:*

Հ. Հակոբյանի գիրքը բաղկացած է ներ-բածությունից, չորս գլուխներից (իրենց համապատասխան ենթագլուխներով), վեր-ջաբանից և մատենագրություն բաժնից: Ա-ռաջին գլուխը վերնագրված է «Հայրենիք վերադառնալու գաղափարը և նրա էվոլյու-ցիան», երկրորդը «Հայրենիք վերադառ-նալու գաղափարը և սիոնիզմի դասերը», երրորդը «Հայրենիք վերադառնալու գա-ղափարը և Հայ դատը պատմագրական ա-ռումով», չորրորդը «Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի իրա-վական հիմքերը»: Կարծում ենք, գիտակա-նորեն պարտ ու պատշաճ կլինի արծարծել այն հիմնական պրոբլեմները և դրանց հա-րակից խնդիրները, որոնք կազմում են սույն գրքի էությունը և մանավանդ դրանց լուծմանն ու լուսաբանմանն ուղղված հե-ղինակի մոտեցումները: Նման վերաբեր-մունքը գիտական առումով կարելի է հիմ-նավորված համարել:

Գլխավոր խնդիր ունենալով հիմնավո-րելու տարագիր հայության իր առևանդ-ված հայրենիքը ետ ստանալու պահանջը, հեղինակը բարձրացրել, քննարկել և լուսա-բանել է ներքո թվարկվող հարցերը պայ-մանականորեն դրանք բաժանելով չորս խմբերի:

Առաջին խումբ. ժողովուրդների բռնի և հարկադրական տարագրության համառոտ պատմությունը հնագույն ժամանակներից, դրա պատճառները և այս աղերսով հայրե-նիք վերադառնալու գաղափարի վերապրած էվոլյուցիան. ըստ այդմ՝

ա) «Հայրենիք» հասկացության ծագու-մը որպես պատմական կատեգորիա և նրա աեղը ժամանակակից միջազգային իրա-վունքում,

բ) հայրենիք վերադառնալու գաղափա-րը հին և միջին դարերում,

գ) հայրենիք վերադառնալու գաղափա-րի զարգացման ընթացքը նոր և նորագույն ժամանակներում,

դ) հայրենիք վերադառնալու գաղափա-րը բռնադաղթի ենթարկված ժողովուրդնե-րի համար և Հայկական հարցը:

Երկրորդ խումբ. հայրենիք վերադառ-նալու գաղափարը և սիոնիզմի դասերը:

Երրորդ խումբ. հայության հայրենիք վերադառնալու պահանջը պատմական ա-ռումով և Հայ դատը.

ա) հայոց հայրենիքը և օսմանիզմի, պանիսլամիզմի և պանթուրանիզմի գաղա-փարախոսությունները,

բ) արևմտահայության հայրենիք վերա-դառնալու գաղափարը և Թուրքիան թուր-քացնելու քաղաքականությունը,

դ) հայության հայրենիք վերադառնա-լու պահանջը միջազգային պայմանագրե-րում, համաձայնագրերում և հայ ազգային կազմակերպությունների որոշումներում և բանաձևերում,

դ) տարագիր հայության հայրենիք վե-րադառնալու հարցի պատմությունը ըստ XIX և XX դարերի դիվանագիտական փաս-տաթղթերի և պատմական իրողություններ-ի:

Չորրորդ խումբ. տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի հիմ-նավորումը միջազգային իրավունքով՝

ա) մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների տեսանկյունից,

բ) ինքնորոշման իրավունքի տեսանկյունից,

գ) պատերազմի իրավունքի տեսանկյունից՝ կապված բռնագաղթի և հայրենազրկության երևույթի հետ,

դ) միջազգային հանցագործություն կատարած պետության միջազգային իրավական պատասխանատվության տեսանկյունից,

ե) քաղաքացիության հարցի տեսանկյունից:

Դժվար չէ նկատել, որ բոլոր թվարկված պրոբլեմներն ու հարցերը օրգանապես մի ամբողջություն են կազմում և սերտորեն շաղկապված են միմյանց հետ: Նշենք, որ գրանցից յուրաքանչյուրի լուսաբանմամբ էլ հեղինակը ամբողջացրել է իր նախընտրած թեմայի շարադրանքը:

Բոլոր թվարկված հարցերի հետազոտումը գրքում կատարված է պատմաքննական, փաստերի, իրողությունների և իրադարձությունների համադրման մեթոդով, հանգամանք, որը թույլ է տվել հեղինակին լիովին հաղթահարել իր ձեռքի տակ եղած փաստական հարուստ նյութը, խուսափել շարադրանքի զուտ էմպիրիկ բնույթից, պահպանելով, սակայն, թեման իր ամբողջական տեսքով ներկայացնելու կարևորությունը: Հանրագումարում ստացվել է փաստառատ, բայց և վերլուծական բնույթի, շատ ու շատ կողմերով ուշագրավ մենագրական մի գործ:

Մենագրությունը շաբադրված է ազբյուրագիտական հարուստ նյութերի հիման վրա: Հ. Հակոբյանի՝ հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներին ազատ ու սահուն տիրապետելը, նրան զգալապես օգնել է թեման շարադրել այդ լեզուներով առկա փաստական նյութի ըստ ամենայնի օգտագործմամբ, հանգամանք, առանց որի անհնարին կլիներ հիմնահարցի այսօրինակ ուսումնասիրումը:

Այլազան և այլալեզու են հեղինակի օգտագործած աղբյուրները՝ սկսած հույն, հռոմեացի և հայ պատմիչներից մինչև մեր օրերի հայ և օտար հեղինակները: Հ. Հակոբյանը պատշաճ մակարդակով քննարկել և արժեվորել է թեմային առնչվող դրականությունը՝ մենագրական գործերը, հոդվածները, փաստագրական և այլ կարգի ժողովածուները՝ անհրաժեշտ նշանակություն տալով իր կողմից հետազոտվող այս կամ այն հարցը լուսաբանելիս գրանցից յուրաքանչյուրի կոնկրետ կարևորությանը: Մենագրության մեջ օգտագործված են նաև արխիվային նյութեր: Աղբյուրագիտական նյութերը հեղինակը օգտագործել է իր հիմնական թեմայի, այն է՝ տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական և իրավական հիմքերի բացահայտման, տարագիր հայության իր առևանգված հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը և Արևելյան Հայաստանից բռնազավթված հողերը ետ ստանալու համար: Այս ինդիրը հեղինակը հիմնավորապես լուծել է և լուծել է գիտական բարձր մակարդակով:

Եվ քանի որ սույն աշխատանքը սերտորեն առնչվում է նաև Արևմտյան Հայաստանի տարածքի հետ, բնական է, որ հեղինակը արծարծել է ժամանակակից քրդական շարժման խնդիրը: Նա գտնում է, որ Հայաստանը և հայ ժողովուրդը պետք է շուտով և արմատապես պարզեն իրենց վերաբերմունքը քրդական ազատագրական շարժման նկատմամբ: Հ. Հակոբյանը շեշտում է այն ճշմարիտ դրույթը, թե հրաժարվելով Արևմտյան Հայաստանի նկատմամբ տարածքային պահանջատիրությունից, մենք գնում ենք մեծ ռիսկի, որը էլ ավելի կբարդացնի Հայ դատի լուծումը ապագայում: «Քրդական ազատագրական շարժումը, որը նեբկայումս զինված պայքար է մղում թուրքական բռնատիրության դեմ, հաջողության դեպքում կտիրանա Արևմտյան Հայաստանին, մանավանդ երբ հայերը իբենք հրաժարվեն իրենց հայրենիքից»,— գրում է հեղինակը (էջ 399): Նա միաժամանակ չի մոռացել նշել այն երևույթը, որ արդեն միջազգային մամուլում և

հրապարակված որոշ քարտեզներում Արևմտահայաստանը, մինչև իսկ Արևելահայաստանի որոշ տարածքներ հիշատակվում են իբրև «քրդական»: Ավելացնենք, որ նույն կերպ են վարվել Մոսկվայում 1999 թ. հրատարակված «Քուրդիստան» գրքի հեղինակները: Քրդական շարժման կապակցությամբ նույնպես հեղինակը անհրաժեշտ է համարում բարձրացնել արևմտահայության հայրենիք վերադառնալու հարցը: Նշենք, որ մենք բաժանում ենք Հ. Հակոբյանի անհանգստությունն այդ առթիվ: Մնում է, որ հանրապետության բարձր ղեկավարությունն անհրաժեշտ հետևություններ անի դրանից, և ոչ թե Հայաստանը և հայ ժողովուրդը, ինչպես կարծում է հեղինակը:

Հ. Հակոբյանի գիտական բարձր մակարդակով կատարված ներկա աշխատության վերաբերյալ կուզենայինք որոշ հարցերում տալ մեր մոտեցումները: Ունենք որոշակի նկատառումներ հատկապես երկրորդ գլխի 4-րդ ենթաբաժնի առթիվ, որը վերնագրված է «Հայերի հայրենիք վերադառնալու հարցը և Խորհրդային Ռուսաստանը» (էջ 277–304): Այստեղ հեղինակի առաջ քաշած բոլոր մտքերի և դրույթների հետ չէ, որ կարելի է համաձայնել:

Հետևելով ռուս պատմաբան Սերգեյ Վոլկովին, Հ. Հակոբյանը նույնպես գտնում է, որ Թուրքիան եղել է Ռուսաստանի մշտական թշնամին, ավելացնելով «Սակայն Թուրքիան մնաց իբրև Ռուսաստանի «ազգային թշնամի» մինչև խորհրդային իշխանության հաստատումը, որի և քեմալական վարչակարգի միջև հաստատվեցին սրտագին հարաբերություններ» (էջ 279): Միշտ չէ, որ ռուս-թուրքական հարաբերությունները եղել են թշնամական և ոչ էլ սովետա-թուրքական հարաբերություններն էին մշտապես բարեկամական ու սրտագին: Հայտնի է, որ արդեն 1920 թ. նոյեմբերին Լենինը քեմալական շարժումը գնահատում էր որպես բուրժուա-նացիոնալիստական շարժում: Եվ ապա՝ XIX դ. 90-ական թվականներին, օրինակ, ռուս-թուրքական հարաբերությունները չես գնահատի որպես թշնամական:

Հեղինակի կարծիքով «Քեմալ-Լենին բարեկամությունը մի հարվածով ոչնչի հավասարեցրեց այն առավել կարևոր վաստաթուղթը, որն անմիջապես և ամբողջությամբ վերաբերում էր Հայ դատին՝ Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի դեկրետը «Թուրքահայաստանի մասին» (էջ 280): Նշենք, որ 1920–1921 թթ. այդ դեկրետի իրական արդյունքներն արդեն «առ ոչինչ էին» դարձրել և դա կապ չուներ Լենին-Քեմալ հարաբերությունների հետ: Ռուսական զորքի դուրսբերումը Արևմտյան Հայաստանից, որին իրադարձությունների բերումով ուզեր-չուզեր պիտի գնար Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը, արդեն այդ դեկրետի իրական արժեքը դարձրել էր «առ ոչինչ»:

Եվ առհասարակ, պետք է ընտելանանք մեկընդմիշտ հաշտվելու այն իրողության հետ, որ յուրաքանչյուր ազգային կառավարություն (այդ թվում նաև խորհրդային) նախ և առաջ լուծում է իր երկրի առաջ դրված խնդիրները: Հաշտվելով այդ ճշմարտության հետ, կդադարենք մեր հարցերը անընդհատ այլոց միջոցով լուծելու խնդրողի դերից: Աշխատության 284-րդ էջում կարդում ենք. «Եվ այնուամենայնիվ, դեկրետով Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը ճանաչեց արևմտահայության հայրենիք վերադառնալու և նրա ինքնիշխան տերը դառնալու իրավունքը: Սակայն ցեղասպանության ֆոնի վրա այդ իրավունքի ճանաչումը հանրաքվեի միջոցով արդար լուծում չէր: Հետագա սերտ համագործակցությունը քեմալականների հետ ապացուցեց, որ հայ ժողովրդի ճակատագիրը ամենևին չէր հուզել լենինյան ղեկավարությանը, որը որոշել էր հայերի ամենակենսական շահերը զոհել հանուն «համաշխարհային հեղափոխության», որի առաջամարտիկն էր համարում Մերձավոր և Միջին Արևելքում քեմալական Թուրքիան,

քանզի վերջինս պայքարում էր Օսմանյան կայսրությունը անգամահատելու Անտանտի փորձերի դեմ: Հանդես գալ այդ ժամանակավրեպ ե պարտության մատնված կայսրության ամբողջականության պահպանման օգտին, նշանակում է խաչ քաշել թե Հայ դատի և թե արևմտահայության հայրենիք վերադառնալու վրա»: Ժամանակի պատմությանը իրազեկ հետազոտողը չի կարող համաձայնվել հեղինակի այս մեղադրանքների հետ: Պպետք է մոռանալ, որ 1918 թ. Խորհրդային Ռուսաստանն ինքը գտնվում էր ծայրակա ծանր պայմաններում, իսկ հետագայի նրա համաձայնությունը քեմալականների հետ թելադրվում էր ռուսական Խորհրդային պետության պաշտպանական շահերով, պետություն, որի դեմ կռվում էին անգլո-ֆրանսիական ուժերը: Այնպես, որ հիմնական խնդիրը ոչ թե համաշխարհային հեղափոխության ծավալումն էր, այլ նորաստեղծ Խորհրգային Ռուսաստանի վտանգազերծումը: Քեմալը կռվում էր նշված ուժերի դեմ և խորհրդային կառավարությունն էլ տվյալ պահին օգնում էր նրան: Կարծում եմ զարմանալու ոչինչ չկա, եթե չենք մոռանում մյուսների շահերը և չենք ղեկավարվում միայն զուտ ազգային հայրենասիրական պահանջներով:

Հ. Հակոբյանը շատ լավ գիտե, որ քաղաքականության մեջ մշտապես գործում են տվյալ պահի որոշիչ հանգամանքները՝ կապված տվյալ պետության շահերի հետ: 293-րդ և այլ էջերում հեղինակը հայտնում է այն միտքը, թե 1920 թ. վերջերին Խորհրդային Ռուսաստանի կողմից Հայաստանին օգնելու որպես նախապայման դրվում էր երկրի խորհրդայնացումը: «Բանն էլ այն է,— ասում է հեղինակը,— որ գլխավոր նպատակը վերջինն էր (այսինքն Հայաստանի խորհրդայնացումը — Վ. Մ.), որը Խորհրդային Ռուսաստանին թույլ չէր տալիս ոչ միջամտել հայ-թուրքական պատերազմին և ոչ էլ օգնել Հայաստանին՝ ետ մղելու թշնամուն, քանզի թուրքերի հաղթանակը Հայաստանի խորհրդայնացման նախապայմանն էր՝ պարտված Հայաստանի անելանելի վիճակը կստիպեր դաշնակցությանն իշխանությունը զիջել հայ բոլշևիկներին, ինչը և տեղի ունեցավ»:

Մենք մի կողմ ենք թողնում հակասական այս մտքերի պարզաբանումը և կուզենայինք պարզից էլ պարզ դնել արմատական այն հարցը, որ եթե այն ժամանակ (1920 թ. ապրիլ-մայիսին) դաշնակցության ղեկավարությունը ընդուներ Հայաստանի խորհրդայնացման կուրսը (որը նա կատարեց մի քանի ամիս հետո), ապա Հայաստանի մեջ կմնային թե՛ Նախիջևանը և թե՛ Ղարաբաղը. այդ հեռատեսությունը նա չունեցավ: Մի գյուղագիր Նարիմանով ավելի խելոք գտնվեց, քան մեր բարձր ուսյալները: Ամիսներ հետո Լեդրանի հետ բանակցելիս արդեն Ռուբեն Տեր-Մինասյանն ինքը ստիպված էր դնել Հայաստան Կարմիր բանակի մուտքը արագացնելու հարցը: Համաձայնվելով Է. Զոհրաբյանի այն ճիշտ մտքին, որ եթե Հայաստանի Հանրապետության կառավարությունը ժամանակին «ընդառաջ գնար անխուսափելիին» (այսինքն խորհրդայնացմանը — Վ. Մ.) և Կարմիր բանակի զորամասեր հրավիրեր Հայաստան, ապա կարող էր լուծել ազգային որոշ խնդիրներ, Հ. Հակոբյանը տեղն ու տեղը գրում է, թե թեև դա փրկության միակ ելքն էր, բայց չէր լուծում տարածքային խնդիրները, քանի որ խորհրդային ղեկավարությունը մերժել էր Սևրի պայմանագիրը (էջ 296): Բայց այդ օրհասական պահին մի՞թե առաջնայինը եղածը պահպանելը և ժողովրդին փրկելը չէր:

Ամփոփելով մեր դիտողությունները, ստիպված ենք կրկնել այն հանրահայտ իրողությունը, որ 1920 թ. նոյեմբերին միայն խորհրդայնացման միջոցով հնարավոր եղավ Հայաստանից դուրս քշել քեմալական զորքերին և երկրի գոնե այս մասն ու նրա բնակչությունը փրկել անխուսափելի կործանումից, որն արդեն ձեռնարկել էին այսպես կոչված հեղափոխական քեմալական զորքերը:

Ինչպես տեսանք, մեր դիտողությունները վերաբերում են աշխատության երկրորդ գլխի 4-րդ «Հայերի հայրենիք վերադառնալու հարցը և Խորհրդային Ռուսաստանը» ենթարաժնի մի քանի հարցերին և դրանք, իրոք, չեն ազդում գիտական այն բարձր կարծիքի վրա, որ ունենք Հակոբ Հակոբյանի «Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական և իրավական հիմքերը» մենագրության վերաբերյալ: Հ. Հակոբյանի աշխատությունը նորություն է մեր պատմագիտական գրականության մեջ: Հեղինակի առաջ քաշած դրույթները և դրանց քննական շարադրանքը, աշխատության մեջ ընդգրկված տարալեզու և տարատեսակ ծավալուն նյութերը, դրանց ըստ ամենայնի լուսաբանումը վկայում են նրա կատարած ծավալուն աշխատանքի մասին, որը պատմաքննական լուրջ հետազոտություն է, և հետևապես կարևոր ներդրում մեր պատմագրության մեջ:

ՎԱՐԴԳԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ